«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2022, N 9 - 1 (հարցման կարգով)

2020-2021 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտության «Բիզնեսի կազմակերպում» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված, 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ՀՊՏՀ ռեկտորի 2021 թվականի հունիսի 21-ի N ՈՒՄ/81/1-Ա հրամանով համալսարանից հեռացված ուսանող Լիլիթ Գեղամի Շահինյանի ուսանողական իրավունքները, 20 կրեդիտը գերազանցող ակադեմիական տարբերություններով, 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտության «Մարքեթինգային հաղորդակցություններ» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրսում վերականգնելու թույլտվություն տալու մասին

Լսելով և քննարկելով «2020-2021 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտության «Բիզնեսի կազմակերպում» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված, **արցախյան 44-օրյա պատերազմում 2 եղբայրներին կորցնելու պատճառով** առաջացած հոգեբանական խնդիրների հետևանքով գիտամանկավարժական փորձառությանը չհաճախելու, սահմանված ժամկետում հաշվետվություն չներկայացնելու ու չպաշտպանելու կապակցությամբ **2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից** ՀՊՏՀ ռեկտորի 2021 թվականի հունիսի 21-ի N ՈՒՄ/81/1-Ա հրամանով համալսարանից հեռացված ուսանող **Լիլիթ Գեղամի Շահինյանի** ուսանողական իրավունքները, 20 կրեդիտը գերազանցող (24 կրեդիտ) ակադեմիական տարբերություններով, 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտության «Մարքեթինգային հաղորդակցություններ» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրսում վերականգնելու թույլտվություն տալու մասին հարցը, ***ելնելով նրանից,*** որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի մարտի 2-ի 05/11.2/4433-2022 գրությամբ առաջարկվել է Լիլիթ Գեղամի Շահինյանի ուսանողական իրավունքները նույն մասնագիտության «Մարքեթինգային հաղորդակցություններ» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրսում վերականգնելու մասին հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում, ***հաշվի առնելով***, որ «Բիզնեսի կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագրով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական

ոչ առևտրային կազմակերպությունը 2021-2022 ուսումնական տարում չի իրականացրել ընդունելություն և դադարեցրել է այդ կրթական ծրագրի լիցենզիան, հիմնվելով նախկինում գործած և ուսանողի վերականգնվելու դիմումը տալու պահին այլևս չգործող կրթական ծրագրերի ուսանողների իրավունքները վերականգնելու առնչությամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ցուցումները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. Վերականգնվելու պահին 20 կրեդիտը գերազանցող (24 կրեդիտ) ակադեմիական տարբերություններ ունեցող ուսանող **Լիլիթ Գեղամի Շահինյանի** ուսանողական իրավունքները **վերականգնել** «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտության **«Մարքեթինգային հաղորդակցություններ»** կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա վճարովի ուսուցման համակարգի **1-ին կուրսում 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից** (նույն մասնագիտության «Բիզնեսի կազմակերպում» կրթական ծրագրի լիցենզիայի բացակայության պատճառով):

2. Հաշվի առնել, որ «Մարքեթինգային հաղորդակցություններ» մագիստրոսական կրթական ծրագրով գիտամանկավարժական փորձառությունը սահմանված է 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում:

3. Հաշվի առնել, որ վերականգնվելու համար Լիլիթ Գեղամի Շահինյանի մոտ առաջանում է 24 կրեդիտ առարկայական տարբերություններ հետևյալ դասընթացներից՝ **«Մարքեթինգային տեղեկատվական համակարգեր»** (ստուգարք՝ 4 կրեդիտ), **«Սոցիալական մարքեթինգ»** (քննություն՝ 4 կրեդիտ), **«Մարքեթինգային հաղորդակցությունների կառավարում»** (քննություն՝ 4 կրեդիտ), **«Թվային մարքեթինգ»** (քննություն՝ 4 կրեդիտ), **«Ռազմավարական մարքեթինգ»** (քննություն՝ 4 կրեդիտ) և **«Էկոնոմետրիկ մոդելավորում»** (քննություն՝ 4 կրեդիտ):

4. Հանձնարարել մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանին՝ երկօրյա ժամկետում կազմել և հաստատման ներկայացնել Լիլիթ Գեղամի Շահինյանի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից 1-ին կուրսում վերականգնվելու համար առաջացած առարկայական ստուգարքի և քննությունների հանձնման ժամանակացույցը:

5. Սույն որոշման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. մարտի 4
Երևան